	Հաշիվների ներկայացում և հավաքագրում
Քաղաքականության և ընթացակարգի համարը՝	24828
Քաղաքականության ձեռնարկ՝	Վարչական
Տեսակ	Քաղաքականություն և ընթացակարգ
Փաստաթղթի տերը՝	Silva, Natalie
Ուժի մեջ մտնելու օրը՝	10/21/2016
Հաջորդ վերանայման օրը՝	10/21/2019
Դիմումի շրջանակը (Վերաբերում է հետևյալին)՝	CMC Սուր խնամքի հաստատություններ
Հաստատված է / Հաստատման օրը՝	CMC Իրավաբանական ծառայություններ (A): 08/12/2016 11:31AM PST Joe Nowicki, SVP Գլխավոր ֆինանսական տնօրեն՝ 08/24/2016 08:39AM PST Patrick Rafferty, Կորպորացիայի Գլխավոր գործառնությունների տնօրեն՝ 08/29/2016 01:38PM PST Tim Joslin, Գլխավոր գործադիր տնօրեն՝ 08/30/2016 09:51AM PST Ֆինանսներ և պլանավորում (A): 10/21/2016 10:14AM PST
Կարգավիճակ / Rev #	Պաշտոնական (Վերան. 0)
Ներկայացված է՝	Earnhart, Michele

I. ՆՊԱՏԱԿ

Ապահովելու համար, որպեսզի Համայնքային բժշկական կենտրոնների (Community Medical Centers, CMC) հաշիվների ներկայացման և հավաքագրման գործողությունները իրականացվեն բոլոր կիրառելի օրենքների համապատասխան ձևով:

II. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

A. <u>**Հավաքագրման արտակարգ գործողություն(ներ).**</u> Հավաքագրման արտակարգ գործողություն նշանակում է հետևյալը՝
   1. Անձի վերաբերյալ անբարենպաստ տեղեկությունների հայտնում սպառողական վարկերի հաշվետվությունների գործակալություններին և վարկային բյուրոներին:
   2. Հետաձգում կամ մերժում կամ վճարի պահանջ՝ նախքան բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքի տրամադրումը, քանզի անձը չի վճարել CMC-ի Ֆինանսական աջակցության քաղաքականության ներքո նախկինում տրամադրված մեկ կամ մի քանի ծառայությունների հաշիվները:
   3. Գործողություններ, որոնք պահանջում են իրավական կամ դատական գործընթաց, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝
      a. Կալանք դնել անձի գույքի վրա,
      b. Անձից վերցնել իրեն պատկանող անշարժ գույքը,
      c. Կցել կամ կալանք դնել անձի բանկային հաշվի կամ այլ անձնական սեփականության վրա,
      d. Քաղաքացիական հայց ներկայացնել անձի դեմ,
      e. Նպաստել անձի ձերբակալմանը,

f. Նպաստել, որպեսզի անձի գույքը դատական կարգով ենթարկվի կալանքի և
g. Կատարել անձի աշխատավարձի հետպահում։

4. Անձի պարտքի վաճառք մեկ այլ կողմին.

B. **Հիվանդ**. Հիվանդը ներառում է անձին, ով ծառայություններ է ստացել CMC-ում։

C. **Ֆինանսական աջակցության քաղաքականություն.** Ֆինանսական աջակցության քաղաքականություն՝ CMC-ի քաղաքականությունն է Ֆինանսական աջակցության վերաբերյալ, որը նկարագրում է առկա ֆինանսական աջակցության տեսակները, ինչպես նաև գործընթացն, ըստ որի հիվանդները պետք է դիմեն Ֆինանսական աջակցության համար։

D. **Ֆինանսական աջակցություն.** Ֆինանսական աջակցություն տերմինը վերաբերում է Ամբողջովին բարեգործական խնամքին, Մասնակի բարեգործական խնամքին, Մեծ բժշկական ծախս պահանջող բարեգործական խնամքին և Հատուկ հանգամանքների բարեգործական խնամքին։

E. **CMC-ի Սպասարկման տարածքի հիմնական լեզուն.** CMC-ի սպասարկման տարածքի հիմնական լեզուներն են այն լեզուները, որոնք օգտագործվում են CMC-ի սպասարկող համայնքի կամ 1000-ից պակասի կամ 5%-ի կողմից։ CMC-ն կարող է որոշել CMC-ի համայնքում կամ CMC-ի կողմից հավանաբար ազդեցություն կրող կամ նրա հետ շփվող բնակիչների տոկոսը կամ անգլերենի սահմանափակ հմտություններով անհատների քանակը՝ օգտագործելով որևէ ողջամիտ միջոց։

F. **Չապահովագրված հիվանդ.** Չապահովագրված հիվանդը՝ հիվանդ է, ով չունի իր բժշկական ծախսերի ոչ մի մասին համար վճարման աղբյուր, ներառյալ՝ առանց սահմանափակման՝ առևտրային կամ այլ ապահովագրություն, պետության կողմից հովանավորվող առողջապահական խնամքի նպաստի ծրագրեր կամ երրորդ կողմի պատասխանատվություն, կամ ապահովագրության ներքո նպաստները արդեն սպառվել էին, նախքան ընդունումը։

G. **Ապահովագրված հիվանդ.** Ապահովագրված հիվանդը՝ հիվանդ է, ով ունի իր բժշկական ծախսերի մի մասին համար վճարման երրորդ կողմի աղբյուր։

H. **Հիվանդի պատասխանատվություն համարվող գումար**. Գումար, որն Ապահովագրված հիվանդը պատասխանատու է վճարել իր գրպանից, այն բանից հետո, երբ հիվանդի երրորդ կողմից ապահովագրությունը որոշել է հիվանդի նպաստների գումարը։

I. **Հավաքագրման գործակալություններ**. Հավաքագրման գործակալությունը հիմնարկ է, որը ներգրավված է CMC-ի կողմից՝ Հիվանդներից վճարներ պահանջելու և հավաքագրելու համար։

J. **Հաշիվ ներկայացված ծախսեր**. Հաշիվ ներկայացված ծախսերը այն չզեղչված գումարներն են, որոնց համար CMC-ի սովորաբար հաշիվ է ներկայացնում՝ ապրանքների և ծառայությունների դիմաց։

III. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

A. CMC-ն հաշիվ կուղարկի հիվանդներին և երրորդ կողմի վճարողներին ճշգրտորեն, ժամանակին և համաձայն բոլոր կիրառելի օրենքների և կանոնակարգերի, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝ Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքի Բաժին 127400 et. seq. և Ներքին եկամուտների օրենսգրքի Բաժին 501(r)-ի հիման վրա Միացյալ Նահանգների Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված կանոնակարգեր։

B. Այս քաղաքականությունը վերաբերում է բոլոր CMC հաստատություններին և CMC-ի անունից հանդես եկող բոլոր հավաքագրման գործակալություններին։

C. Եթե այլ կերպ նշված չէ, այս քաղաքականությունը չի վերաբերում բժիշկներին կամ այլ բժշկական խնամքի մատակարարներին, ներառյալ՝ շտապ օգնության բաժանմունքի բժիշկները, անեստեզիոլոգները, ռադիոլոգները, հիվանդանոցային բժիշկները, պաթոլոգները և այլն, ում ծառայությունները չեն ներառված CMC-ի հաշվի մեջ: Այս քաղաքականությունը չի պարտավորեցնում CMC-ին վճարել այդ բժիշկների կամ բժշկական խնամքի այլ մատակարարների ծառայությունների համար: Կալիֆորնիա նահանգում, շտապ օգնության բաժանմունքի բժիշկը, ով անհետաձգելի օգնություն է տրամադրում հիվանդանոցում, պետք է զեղչեր տրամադրի չապահովագրված կամ մեծ բժշկական ծախսերով հիվանդներին, ում եկամուտը ցածր է Դաշնային աղքատության մակարդակից (Federal Poverty Level, FPL) 350%-ից:

IV. ԳՈՐԾԸՆԹԱՑ

A. Ապահովագրության տեղեկությունների ձեռքբերում
   1. CMC-ը պետք է ողջամիտ ջանքեր գործադրի՝ Հիվանդներից ձեռք բերելու համար տեղեկություններ, թե արդյոք մասնավոր կամ պետության կողմից հովանավորվող ապահովագրությունը կամ հովանավորչությունը կարող է ամբողջովին կամ մասնակիորեն ապահովագրել CMC-ի կողմից տրամադրված ծառայությունները:
B. Երրորդ կողմին հաշիվ ներկայացնելը
   1. CMC-ն պետք է հետևողական լինի՝ երրորդ կողմի վճարողից ստանալու իրեն հասանելիք բոլոր գումարները, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝ պայմանագիր կնքած կամ չկնքած վճարողներ, փոխհատուցման վճարողներ, պատասխանատվության և ավտոտրանսպորտի ապահովագրողներ և պետական ծրագրերի վճարողներ, որոնք կարող են ֆինանսապես պատասխանատու լինել Հիվանդի խնամքի համար: CMC-ն ժամանակին հաշիվ կներկայացնի բոլոր համապատասխան երրորդ կողմի վճարողներին՝ համաձայն Հիվանդի կամ նրա լիազորած անձի կողմից տրամադրված կամ իր կողմից հաստատված տեղեկությունների:
C. Ապահովագրված հիվանդներին հաշվի ներկայացում
   1. CMC-ն պետք է անմիջապես հաշիվ ներկայացնի ապահովագրված Հիվանդին՝ Հիվանդի պատասխանատվությունը համարվող գումարի չափով, ինչպես հաշվարկված է Նպաստների բացատրության (Explanation of Benefits, EOB) մեջ և հրահանգավորված երրորդ կողմի վճարողի կողմից:
D. Չապահովագրված հիվանդներին հաշվի ներկայացում
   1. CMC-ն պետք է անմիջապես հաշիվ ներկայացնի չապահովագրված Հիվանդին CMC-ի կողմից տրամադրված ապրանքների և ծառայությունների համար՝ օգտագործելով CMC-ի Հաշիվ ներկայացվող գանձումները:
E. Ֆինանսական աջակցության մասին տեղեկություններ
   1. Հիվանդներին ներկայացվող բոլոր հաշիվները պետք է ներառեն Ծանուցում իրավունքների վերաբերյալ փաստաթուղթը, որը կցված է այս Քաղաքականությանը, որպես Փաստաթուղթ A և որը ներառում է իրավունակ Հիվանդներին հասանելիք Ֆինանսական աջակցության վերաբերյալ համառոտ տեղեկություններ:
F. Մանրամասն Հաշվի ներկայացում
   1. Բոլոր հիվանդները որևէ պահի կարող են պահանջել իրենց հաշվի մանրամասն հայտարարություն:

G. Վեճեր

1. Որևէ հիվանդ կարող է վիճաբանել իր հաշվում տեղ գտած որևէ ապրանք կամ գանձում: Հիվանդները պետք է վեճը սկսեն գրավոր կամ զանգահարելով Հիվանդների ֆինանսական ծառայությունների ներկայացուցչին: Եթե հիվանդը պահանջում է հաշվի վերաբերյալ փաստաթուղթ, աշխատակազմի անդամները պետք է ողջամիտ ջանքեր գործադրեն՝ տրամադրելու համար պահանջվող փաստաթղթերը տաս (10) օրվա ընթացքում: Հիվանդի կողմից վեճը սկսելուց հետո, CMC-ն կսառեցնի հաշիվը առնվազն երեսուն (30) օրով՝ նախքան կիրականացնի հավաքագրման հետագա գործողությունները:

H. Հավաքագրման գործելակերպեր

1. Ընդհանուր հավաքագրման գործելակերպեր. Համաձայն այս Քաղաքականության, CMC-ն կարող է իրականացնել հավաքագրման ողջամիտ ջանքեր՝ Հիվանդներից վճարումներ ստանալու համար: Ընդհանուր հավաքագրման գործելակերպերը կարող են ներառել հիվանդներին հաշվի ներկայացում, հեռախոսազանգեր և հիվանդին կամ երաշխավորին ուղարկված հաշիվների ուղեգրեր: CMC-ն պետք է գործընթացներ մշակի՝ ապահովելու համար, որ հաշիվների վերաբերյալ հիվանդների հացերն ու բողոքները ուսումնասիրվում և, անհրաժեշտության դեպքում, ուղղվում են՝ այդ մասին ժամանակին տեղյակ պահելով հիվանդին:
2. Հավաքագրման արտակարգ գործողությունների արգելք. CMC-ն և Հավաքագրող գործակալությունները չպետք է իրականացնեն Հավաքագրման արտակարգ գործողություններ՝ Հիվանդներից հավաքագրում իրականացնելու ժամանակ:
3. Հավաքագրում չպետք է իրականացվի Ֆինանսական աջակցության համար դիմումի գործընթացում. CMC-ն և Հավաքագրող գործակալությունները չպետք է իրականացնեն Հավաքագրման գործողություններ այն Հիվանդից, ով դիմում է ներկայացրել Ֆինանսական աջակցության համար և պետք է վերադարձնեն Հիվանդից ստացված որևէ գումար, որը ստացվել է հիվանդի դիմումի ուսումնասիրումից առաջ կամ դրա ընթացքում:
4. Ֆինանսական աջակցության համար դիմումի տեղեկությունների օգտագործման արգելք. CMC-ն և Հավաքագրող գործակալությունները իրենց հավաքագրման գործունեության ընթացքում չեն կարող օգտագործել որևէ տեղեկություն, որը Հիվանդից ստացվել է Ֆինանսական աջակցության համար դիմելու գործընթացի ժամանակ: Այս բաժնում ոչ մի բան չի արգելում այն տեղեկությունների օգտագործումը, որոնք CMC-ն և Հավաքագրող գործակալությունները ձեռք են բերել Ֆինանսական աջակցության գործընթացից անկախ:

I. Վճարման պլաններ

1. Իրավասու Հիվանդներ. CMC-ն և իր անունից գործող որևէ Հավաքագրող գործակալություն պետք է Չապահովագրված Հիվանդներին և Ֆինանսական աջակցության համար իրավունակ Հիվանդներին առաջարկի պայմանագիր կնքելու տարբերակ՝ իրենց Հիվանդի պատասխանատվություն համարվող (Ապահովագրված հիվանդի համար) և որևէ այլ պարտքի գումարը վճարել ժամանակի ընթացքում: CMC-ն կարող է նաև մտնել նաև վճարման պլանների մեջ Ապահովագրված հիվանդների համար, ովքեր անկարող են միանգամից վճարել Հիվանդի պատասխանատվություն համարվող գումարը:
2. Վճարման պլանի պայմանները. Բոլոր վճարման պլանները չպետք է տոկոս գանձեն: Հիվանդները պետք է հնարավորություն ունենան բանակցելու վճարման պլանի պայմանները: Եթե CMC-ն և Հիվանդը չկարողանան համաձայնության գալ վճարման պլանի պայմանների հարցում, CMC-ն պետք է ընդլայնի վճարման պլանի տարբերակը՝ ըստ որի Հիվանդը կարող է ամսական վճարի ոչ ավելի, քան Հիվանդի ընտանեկան ամսական եկամտի տաս տոկոսը (10%)՝ բացառությամբ հիմնական

ապրելու ծախսերը: «Հիմնական ապրելու ծախսերը»՝ նշանակում է ծախսեր հետևյալից յուրաքանչյուրի համար՝ վարձակալության վճար կամ տան վճարներ և պահպանման ծախսեր, ուտելիք և տան պարագաներ, կոմունալ ծախսեր և հեռախոսավարձ, հագուստ, բժշկական և ատամնաբուժական վճարներ, ապահովագրություն, դպրոց և երեխայի խնամք, երեխայի կամ ամուսնու/կնոջ աջակցություն, փոխադրումներ և ավտոմեքենային ծախսեր, ներառյալ՝ ապահովագրություն, վառելիք և վերանորոգումներ, ամսեկան վճարումներ, լվացք և մաքրում և այլ արտակարգ ծախսեր:

3. Վճարման պլանը չգործող հայտարարելը. Երկարաձգված վճարման պլանը կարող է հայտարարվել այլևս չգործող, եթե Հիվանդը 90 օրվա ընթացքում չի վճարում պարտք համարվող բոլոր հաջորդական վճարները: Նախքան երկարաձգված պլանը այլևս չգործող հայտարարելը, CMC-ն կամ Հավաքագրող գործակալությունը պետք է ողջամիտ փորձեր կատարի՝ կապվելու հիվանդի հետ հեռախոսով և գրավոր ծանուցում ուղարկի, որ երկարաձգված վճարման պլանը կարող է չգործող հայտարարվել, և որ Հիվանդը հնարավորություն ունի կրկին բանակցելու երկարաձգված վճարման պլանի պայմանները: Նախքան երկարաձգված վճարման պլանը կհայտարարվի չգործող, CMC-ն կամ Հավաքագրող գործակալությունը պետք է փորձեն կրկին բանակցել երկարաձգված վճարման պլանի պայմանները, եթե հիվանդը խնդրում է այն անել: Այս բաժնի նպատակով՝ հիվանդին ուղարկվող ծանուցումը և հեռախոսազանգը կարող է կատարվել հիվանդի վերջին հայտնի հեռախոսահամարով և հասցեով: Այն բանից հետո, երբ վճարման պլանը հայտարարվի չգործող, CMC-ն կամ Հավաքագրող գործակալությունը կարող է սկսել հավաքագրման գործողությունները՝ այս քաղաքականության համապատասխան եղանակով:

J. Հավաքագրող գործակալություններ

1. CMC-ն կարող է փոխանցել հիվանդի հաշիվները Հավաքագրող գործակալությանը հետևյալ պայմաններով՝
    a. Հավաքագրող գործակալությունը պետք է գրավոր պայմանագիր ունենա CMC-ի հետ,
    b. Հավաքագրող գործակալության հետ CMC-ի գրավոր պայմանագրում պետք է նշված լինի, որ Հավաքագրող գործակալության կողմից իր գործունեության կատարումը պետք է հավատարիմ մնա CMC-ի առաքելությանը, տեսլականին, հիմնական արժեքներին, Ֆինանսական աջակցության քաղաքականության պայմաններին, այս Հաշվի ներկայացման և հավաքագրման քաղաքականությանը և Հիվանդանոցի արդար գործելակերպի օրենքին, Առողջապահության և անվտանգության օրենսգրքի Բաժիններ 127400-ից մինչև 127446-ը,
    c. Հավաքագրող գործակալությունը պետք է համաձայնի, որ այս չի իրականացնի Հավաքագրման արտակարգ գործողություններ՝ ստանալու համար հիվանդի պարտքը,
    d. CMC-ն պետք է պահպանի պարտքի սեփականությունը, և պարտքը չի կարող վաճառվել Հավաքագրող գործակալությանը,
    e. Հավաքագրող գործակալությունը պետք է գործընթաց իրականացնի՝ պարզելու համար այն հիվանդներին, ովքեր որակավորվում են Ֆինանսական աջակցության համար, այս հիվանդներին հայտնելու Ֆինանսական աջակցության քաղաքականության առկայության և մանրամասների մասին, ինչպես նաև ուղղորդելու Ֆինանսական աջակցություն ցանկացող հիվանդներին հետ՝ դեպի CMC-ի Ընդունող բաժին՝ (559) 459-2998 համարով կամ www.communitymedical.org

հասցեով: Հավաքագրող գործակալությունը չպետք է որևէ վճար պահանջի հիվանդից, որը դիմում է ներկայացրել Ֆինանսական աջակցության համար և պետք է վերադարձնի որևէ գումար, որ հիվանդից ստացել է հիվանդի դիմումի ուսումնասիրման գործընթացից առաջ կամ դրա ժամանակ:

K. Հաշիվների ուղարկում հավաքագրման համար

1. Հաշիվը կուղարկվի հավաքագրման համար, եթե այն չի վճարվել ուղարկելուց հետո 150 օրվա ընթացքում՝ Հիվանդների ֆինանսական ծառայությունների տնօրենի հայեցողությամբ: Չվճարելը, հասանելի ծրագրերին չդիմելը և CMC-ի հետ կապ չհաստատելը կլինեն այն գործոնները, որոնք նկատի կառնվեն հավաքագրման համար հաշվի ուղարկման ժամանակ:
2. Բոլոր երրորդ կողմի վճարողներին պետք է պատշաճ կերպով հաշիվ ներկայացվի, երրորդ կողմի վճարողի վճարումները չպետք է ընթացքի մեջ լինեն, և մնացյալ պարտքը պետք է լինի հիվանդի ֆինանսական պատասխանատվությունը: Հավաքագրող գործակալությունը չի կարող հիվանդին հաշիվ ներկայացնել որևէ գումարի համար, որը պարտավոր է վճարել երրորդ կողմի վճարողը:
3. Հավաքագրող գործակալությունը պետք է յուրաքանչյուր հիվանդին ուղարկի Ֆինանսական աջակցության իրավունքների ծանուցման պատճեն:
4. Առնվազն 150 օր պետք է անցած լինի այն օրից, երբ Հիվանդանոցը Հիվանդին ուղարկել է սկզբնական հաշիվը:
5. Հիվանդը չի բանակցում վճարման պլանը կամ չի կատարում ողջամիտ գումարի կանոնավոր մասնակի վճարներ:
6. Երրորդ կողմի պատասխանատվություն. Այս քաղաքականության մեջ ոչ մի բան չի խանգարում CMC-ին, իր մասնաճյուղերին կամ դրսի հավաքագրող գործակալություններին հայցել երրորդ կողմի պատասխանատվություն:

IV. ՀՂՈՒՄՆԵՐ

26 Դաշնային կարգավորումների օրենսգիրք 1.501(r)

Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքի Բաժիններ 124700-127446

Հղում կատարված փաստաթղթեր

Հղման տեսակ	Հղման տեսակ	Հղման տեսակ
Այս փաստաթղթում հղումներ կատարած փաստաթղթերը		
Referenced Documents	Financial Assistance Policy Notice of Rights	

Այս փաստաթղթի թղթային տարբերակը կարող է թարմացված չլինել, և նրան չի կարելի ապավինել պաշտոնական նպատակների համար: Թարմ տարբերակը կարելի է գտնել https://www.lucidoc.com/cgi/doc-gw.pl?ref=communitymc:24828 *հասցեով:*